

Կամավորների միջազգային օր, 5 դեկտեմբերի 2008թ.

ՄԱԿ-ի Կամավորներ ծրագրի գործադիր համակարգող Տլավիա Պանսիերիի ելույթը

Այն գործունեությունը, որը ձեռնարկել է և որին աջակցում է ՄԱԿ-ի կամավորների ծրագիրը համայն աշխարհում, օրինակներ է ներկայացնում, թե ինչպես է հնարավոր կյանքի կոչել ՄԱԿ-ի արժեքները հստակ գործողությունների միջոցով: Ամեն տարի հազարավոր կամավորներ ներգրավվում են համայն աշխարհում խաղաղության և զարգացման ծրագրերում, նրանց թվում են ավելի քան 7500 ՄԱԿ-ի կամավորներ, ովքեր գիտելիքներ և հմտություններ են ներդնում՝ հնարավորություններ ստեղծելու համար: Միլիոնավոր կամավորներ նպաստում են իրենց իսկ համայնքների կենսունակությանը կամավորական ջանքերի միջոցով:

Մենք ապրում ենք ավելի ու ավելի փոխկապակցվող աշխարհում, որտեղ ունենք համընդհանուր հետաքրքրություն միմյանց ջանքերին և ձեռքբերումներին աջակցելու գործում: Ֆինանսական մարտահրավերները, զինված կոնֆլիկտները, հիվանդությունները, բնական աղետները սահմաններ չեն ճանաչում, և մենք կարող ենք հաղթահարել դրանք միայն միասին: Ներգրավվելով և աջակցելով դրանց լուծումներին՝ մենք կարող ենք օգտագործել այս փոխկապակցվածությունը մեր օգտին:

2008թ. Կամավորների միջազգային օրը, ՄԱԿ-ի Կամավորներ ծրագիրը սկսում է իր “Online կամավորական ծառայությունը ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով, և վերսկսում է կատարելագործված անգլերեն ծառայությունը: Այս ծառայությունը միավորում է հարյուրավոր զարգացման ծրագրեր և հազարավոր “Online” կամավորներ ամբողջ աշխարհից: Դա հիմք է հանդիսանում խաղաղության և զարգացման մարտահրավերներին միտված համագործակցության համար, և Հազարամյակի Զարգացման նպատակները կյանքի կոչելու հարցում երկրներին օժանդակելու համար:

Օգտագործելով ՄԱԿ-ի կամավորներ ծրագրի “Online” կամավորական ծառայությունը՝ “Online” կամավորները նպաստում են շրջակա միջավայրին

վերաբերող ծրագրին Աֆրիկայում, մարդու իրավունքներին՝ Ասիայում, երիտասարդների կրթությանը՝ Լատինական Ամերիկայում, և համայնքային աշխատանքին՝ համայն աշխարհում: “Online” կամավորությունը խթանում է հասարակական ներգրավվածությունը և ներդնում է ռեալ ուղիներ զարգացման ծրագրերի և համայնքների աշխատանքում՝ դիմակայելու համար մեր ժամանակների ամենադժվար մարտահրավերներին:

Այս “Online” կամավորներն արժեքավոր հավելում են հանդիսանում ՄԱԿ-ի ազգային և միջազգային կամավորների աշխատանքում, որոնք գործում են 140 երկրներում, ինչպես նաև՝ միլիոնավոր այլ կամավորների աշխատանքում, որոնք ամենօրյա ներդրում են կատարում՝ միտված խաղաղության և զարգացման մարտահրավերներին:

2001թ.-ի Կամավորների միջազգային տարուց ի վեր 8 տարի է անցել, և կամավորությունը շարունակում է ձեռք բերել ճանաչում և աջակցություն: Կամավորների միջազգային տարվա 10-րդ տարեդարձը 2011թ. Հնարավորություն է կամավորներ ներառող բոլոր կազմակերպությունների համար՝ զարգացնելու իրենց աշխատանքը կամավորության գործում՝ և՛ անհատական, և՛ կոլեկտիվ կերպով: Թո՛ղ որ ընդարձակվի կամավորների գործունեության ճանաչումը և խրախուսվի նրանց ներգրավումը Հազարամյակի Զարգացման նպատակներին հասնելու հարցում երկրներին օժանդակելու գործում:

Կամավորների, և՛ “Onsite”, և՛ “Online”, նշանակալի ներդրումն օրինակելի է: Ես շնորհակալություն եմ հայտնում բոլոր կամավորներին իրենց բացառիկ հանձնառությունների և ձեռքբերումների համար: Դուք ոգեշնչման աղբյուր եք մեզ բոլորիս համար:

Թարգմանեցին՝ Օֆելյա Կարապետյանը
Վարդուհի Սեմերջյանը